ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

30 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 138-Ա

ք. Երևան

ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՐՏԱՇԱՏ, ԱՐՄԱՎԻՐ, ԳԱՎԱՌ, ՀՐԱԶԴԱՆ, ԵՂԵԳՆԱՁՈՐ ԵՎ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 12-րդ մասի և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 2-րդ և 11-րդ հոդվածների դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշում է***.

1. Հրապարակել

1) տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից 2026 թվականի հոկտեմբերի 25-ին կայացած Արտաշատ, Արմավիր, Գավառ, Հրազդան, Եղեգնաձոր և Իջևան համայնքներում համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ եզրակացությունը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից 2026 թվականի հոկտեմբերի 25-ին կայացած Արտաշատ, Արմավիր, Գավառ, Հրազդան, Եղեգնաձոր և Իջևան համայնքներում համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ իրականացված մշտադիտարկման արդյունքները՝ համաձայն N 2 հավելվածի:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

30 հոկտեմբերի 2026
ք. Երևան

Հավելված N 1
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի
2026 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 138-Ա որոշման

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-ԻՑ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՐՏԱՇԱՏ, ԱՐՄԱՎԻՐ, ԳԱՎԱՌ, ՀՐԱԶԴԱՆ, ԵՂԵԳՆԱՁՈՐ ԵՎ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2026 թվականի օգոստոսի 20-ի թիվ 286-Ա որոշմամբ, ի թիվս այլնի, հաստատել է 2026 թվականի հոկտեմբերի 25-ի Արարատի մարզի Արտաշատ, Արմավիրի մարզի Արմավիր, Գեղարքունիքի մարզի Գավառ, Կոտայքի մարզի Հրազդան, Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր և Տավուշի մարզի Իջևան համայնքներում համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների (այսուհետ նաև՝ Ընտրություններ) նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը, համաձայն որի՝ նախընտրական քարոզչության ժամանակահատված է սահմանվել 30.09.2026թ. – 23.10.2026թ. մինչև ժամը 24:00:[1]

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) կողմից նախընտրական քարոզչության համար ընտրական օրենսդրությամբ սահմանված տեսալսողական մեդիա ոլորտը կարգավորող բոլոր միջոցառումների կազմակերպման նախապատրաստական աշխատանքները կատարվել են մինչև նախընտրական քարոզչության մեկնարկը՝ հնարավորություն տալով բոլոր մասնակիցներին քարոզչական գործընթացին ներգրավվել հստակ, կանխատեսելի և հավասար պայմաններով:

Այսպես, Հանձնաժողովը 2026 թվականի սեպտեմբերի 11-ին ընդունել է «Հայաստանի Հանրապետության մարզկենտրոն ընդգրկող Արտաշատ, Արմավիր, Գավառ, Հրազդան, Եղեգնաձոր և Իջևան համայնքների ավագանիների՝ 2026 թվականի հոկտեմբերի 25-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հանրային տեսալսողական և հանրային լսողական հեռարձակողի վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը սահմանելու մասին» թիվ 113-Ա որոշումը, որի համաձայն՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում վճարովի

[1] «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների, թեկնածուների գրանցման համար սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 5-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ:

եթերաժամի մեկ րոպեի գինը հանրային տեսալսողական հեռարձակողի «Առաջին ալիք» տեսալսողական ծրագրի համար սահմանվել է 45 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), «Առաջինի լրատվական ալիք» տեսալսողական ծրագրի համար՝ 18 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), իսկ հանրային լսողական հեռարձակողի համար՝ 1 800 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

Հանձնաժողովը նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար ոչ խտրական պայմանների, իսկ քաղաքացիների (ընտրողների) համար անկողմնակալ, ստուգված և հավաստի տեղեկատվություն ստանալու իրավունքի ապահովման նպատակով 2026 թվականի սեպտեմբերի 11-ին ընդունել է նաև «Հայաստանի Հանրապետության մարզկենտրոն ընդգրկող Արտաշատ, Արմավիր, Գավառ, Հրազդան, Եղեգնաձոր և Իջևան համայնքների ավագանիների՝ 2026 թվականի հոկտեմբերի 25-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը հաստատելու մասին» թիվ 112-Ա որոշումը:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20–րդ հոդվածի 6–րդ մասի կարգավորումների համաձայն՝ թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) նախընտրական քարոզչություն իրականացնելու համար եթերաժամ տրամադրող մասնավոր հիմունքներով հեռարձակում իրականացնող տեսալսողական մեդիածառայություն մատուցողները տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ոչ ուշ, քան սահմանված թեկնածուների առաջադրման, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման ժամկետի հաշվարկի սկզբից 5 օր առաջ իրենց եթերով հրապարակում են իրենց վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը, որը չի կարող գերազանցել ընտրությունների նշանակմանը նախորդող վերջին վեց ամսվա համար առևտրային գովազդի միջին արժեքը և որը մինչև նախընտրական քարոզչության ավարտը չի կարող փոփոխվել:

Նշված տեղեկատվությունը վճարովի եթերաժամ տրամադրող տեսալսողական մեդիածառայությունների կողմից հրապարակվել է մինչև 2026 թվականի սեպտեմբերի 15-ը ներառյալ:[2]

Վճարովի եթերաժամ տրամադրելու վերաբերյալ լիցենզավորված ընկերություններից տեղեկատվություն մարզկենտրոններ ընդգրկող համայնքների մասով տարածել են հետևյալ ընկերությունները՝

- Հանրապետական սփռում ունեցող երկու տեսալսողական մեդիածառայություն մատուցող ընկերություններ իրենց կողմից հեռարձակվող «ԿԵՆՏՐՈՆ» և «ՇԱՆԹ» տեսալսողական ծրագրերով.

[2] https://tvradio.am/wp-content/uploads/2026/09/Mek-rope-nor-2026.pdf

- Մայրաքաղաքային սփռում ունեցող երեք տեսալսողական մեդիածառայություն մատուցող ընկերություններ իրենց կողմից հեռարձակվող «5-ՐԴ ԱԼԻՔ», «ՖՐԻ ՆՅՈՒՋ» և «21 ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրերով.
- Մարզային սփռում ունեցող հինգ տեսալսողական մեդիածառայություն մատուցող ընկերություններ իրենց կողմից հեռարձակվող «ԱՐԱՐԱՏ ԹԻՎԻ», «ԳԵՂԱՄԱ», «ԿՈՏԱՅՔ ԹԻ ՎԻ», «ՍՅՈՒՆԻՔ ԹԻՎԻ» և «ՏԱՎՈՒՇ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրերով.
- Մայրաքաղաքային սփռում ունեցող երեք լսողական մեդիածառայություն մատուցող ընկերություններ իրենց կողմից հեռարձակվող «ՌԱԴԻՈ ՇԱՆՍՈՆ», «ՌԱԴԻՈ ՄԱՐՇԱԼ» և «ԶԱՐԿ ԷՖԷՄ» լսողական ծրագրերով.

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐ

2026 թվականի հոկտեմբերի 25-ի Արտաշատ, Արմավիր, Գավառ, Հրազդան, Եղեգնաձոր և Իջևան համայնքներում համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների համար գրանցվել են հետևյալ կուսակցություններն ու դաշինքները՝

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔ

1. «ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
2. «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
3. «ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔ

1. «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ

1. «ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ
   (կազմում՝ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ և «ԳՈՐԾԱՐԱՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ)
2. «ԻՆՔՆԻՇԽԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
3. «ՀԱՅԿԱԿԱՆ ՔՎԵ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔ

1. «ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
2. «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

1. «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
2. «ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
3. «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

1. «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
2. «ԻՆՔՆԻՇԽԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Տեսալսողական և լսողական հաղորդումներ հեռարձակող տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը:

2026 թվականի սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 23-ը ներառյալ Հանձնաժողովն իրականացրել է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող տեսալսողական մեդիածառայությունների՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի պահանջներին համապատասխանության վերահսկողություն:

Հանձնաժողովը տեսալսողական մեդիածառայություն մատուցողների հեռարձակած տեսալսողական ծրագրերի՝ ընտրական օրենսդրության համապատասխանության մշտադիտարկումն իրականացնում է՝ հիմք ընդունելով հետևյալը.

1. տեսալսողական ծրագրերի և դրանց տեսագրությունների (ձայնագրությունների) ուղղակի դիտարկման արդյունքները.
2. տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանում մուտքագրված տվյալները.
3. տեսալսողական մեդիածառայություններ մատուցողների կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը.
4. ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների և (կամ) նրանց ներկայացուցիչների կողմից Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվությունը.
5. պետական մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների, քաղաքացիների կողմից Հանձնաժողով պաշտոնապես ներկայացրած տեղեկատվությունը.
6. Հեռարձակողների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության խախտումների մասին զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները:

Հանձնաժողովն ուղղակի դիտարկումն իրականացրել է պատահական ընտրանքի և հավասարաչափ բաշխման սկզբունքով:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն Ազգային ժողովի, Երևանի ավագանու և մարզկենտրոն ընդգրկող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո՝ 10-րդ օրը, Ազգային ժողովի, Երևանի ավագանու և մարզկենտրոն ընդգրկող համայնքների ավագանու

հերթական ընտրությունների ժամանակ նաև 20-րդ օրը, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփման համար օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 2 օր առաջ հրապարակում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացնում տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում օրենսդրության պահանջների կատարման մշտադիտարկման արդյունքները և Հանձնաժողովի եզրակացությունը տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ:

Հանձնաժողովը 2026 թվականի հոկտեմբերի 9-ին ընդունել է «Տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից 2026 թվականի հոկտեմբերի 25-ին կայանալիք Արտաշատ, Արմավիր, Գավառ, Հրազդան, Եղեգնաձոր և Իջևան համայնքներում համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ իրականացված մշտադիտարկման արդյունքները և եզրակացությունը հրապարակելու մասին» թիվ 129–Ա որոշումը[3], որը ներառել է 2026 թվականի սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածի մշտադիտարկման արդյունքները: Նշված տեղեկատվությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել նախընտրական քարոզչության համար սահմանված ժամկետի 10-րդ օրը՝ 2026 թվականի հոկտեմբերի 9-ին:

Հանձնաժողովը 2026 թվականի հոկտեմբերի 19-ին ընդունել է «Տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից 2026 թվականի հոկտեմբերի 25-ին կայանալիք Արտաշատ, Արմավիր, Գավառ, Հրազդան, Եղեգնաձոր և Իջևան համայնքներում համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ իրականացված մշտադիտարկման արդյունքները և եզրակացությունը հրապարակելու մասին» թիվ 135–Ա որոշումը, որը ներառել է 2026 թվականի սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 14-ն ընկած ժամանակահատվածի մշտադիտարկման արդյունքները: Նշված տեղեկատվությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել նախընտրական քարոզչության համար սահմանված ժամկետի 20-րդ օրը՝ 2026 թվականի հոկտեմբերի 19-ին:

Տեղեկատվությունը, որը ներառել է 2026 թվականի սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 23-ն ընկած ժամանակահատվածի մշտադիտարկման արդյունքները և եզրակացությունը, պետք է հրապարակվի և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվի ընտրությունների արդյունքների ամփոփման համար Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 2 օր առաջ՝ 2026 թվականի հեկտեմբերի 30-ին:

[3] Որոշմանը կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝ https://tvradio.am/wp-content/uploads/2026/10/129-%D4%B1.pdf

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑՔ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2026 թվականի սեպտեմբերի 26-ին ընդունել է «Արմավիր, Արտաշատ, Գավառ, Եղեգնաձոր, Իջևան, Հրազդան համայնքների ավագանիների 2026 թվականի հոկտեմբերի 25-ի ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին հանրային տեսալսողական հեռարձակողի և հանրային լսողական հեռարձակողի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի՝ Արմավիրի, Արարատի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Տավուշի, Կոտայքի մարզերում սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողի կողմից եթերաժամ տրամադրելու կարգը և ժամանակացույցը սահմանելու մասին» թիվ 300-Ա որոշումը:[4]

Ընտրական օրենսգրքի համաձայն՝ Ազգային ժողովի, Երևանի ավագանու և մարզկենտրոն ընդգրկող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը նախընտրական քարոզչության ժամանակահատվածում կազմակերպում է նախընտրական բանավեճեր՝ ապահովելով մասնակցության հավասար պայմաններ բոլոր կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար: Նախընտրական բանավեճերի թեման, ձևաչափը և կանոնները որոշում է Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը: Նախընտրական բանավեճերը հեռարձակվում են ուղիղ եթերով: Մարզկենտրոն ընդգրկող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը կազմակերպում է առնվազն մեկական նախընտրական բանավեճ, որին մասնակցության հավասար պայմաններ են ապահովվում ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար: Նախընտրական բանավեճի տևողությունը պետք է լինի ոչ պակաս, քան 90 րոպե:

«ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» և «ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔ» ծրագրերի ուղիղ եթերում նախընտրական վեց բանավեճը հեռարձակվել են հոկտեմբերի 18-ից 23-ն ընկած ժամանակահատվածում: Կազմակերպված բանավեճերից մի քանիսն անցել է հարցազրույցի ձևաչափով, քանի որ քաղաքական ուժերից որոշները հրաժարվել են մասնակցությունից, իսկ Արմավիրի մարզում գրանցված քաղաքական ուժը միայն մեկն է եղել: «ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» և «ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔ» ծրագրերի 2026 թվականի հոկտեմբերի 18-ի և 19-ի մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ վերոնշյալ ծրագրերում հեռարձակված նախընտրական բանավեճերն ապահովված չեն եղել «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված հայերեն ժեստերի լեզվով պարտադիր թարգմանությամբ, ինչպես նաև բանավեճի տևողությունը պակաս է եղել օրենքով սահմանված 90 րոպեից: Նշվածի առնչությամբ Հանձնաժողովը գրություն է հղել Հանրային հեռարձակողի խորհուրդ, որին ի պատասխան ստացվել է հետևյալ պարզաբանումը՝ «Հանրային հեռուստաընկերության կողմից ձեռնարկվել են բոլոր հնարավոր նախապատրաստական աշխատանքները, որպեսզի պահպանվեն

[4] https://res.elections.am/images/Decisions/0-2026/26.09.2026/3/300_A_30-09-2026.pdf

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի և Ընտրական օրենսգրքի համապատասխան հոդվածների պահանջները:

Սակայն մեզանից անկախ պատճառներով ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի կողմից նախընտրական բանավեճերի նկատմամբ հետաքրքրվածությունը բավականին ցածր է եղել:

Մինչ այս պահը (*22.10.2026թ.*) Հանրայինի եթերում ՏԻՄ ընտրություններին առնչվող մեկ բանավեճ է եթեր հեռարձակվել, որի մասնակիցներից ներկա լինելու վերջնական հավաստիացումը ուշ ենք ստացել, ինչի պատճառով էլ ժեստերի լեզվով թարգմանությունը չենք կարողացել ապահովել: Մյուս երկու բանավեճերը ստիպված ենք եղել անցկացնել հարցազրույցի ձևաչափով, քանի որ թեկնածուներից մի քանիսը հրաժարվել են մասնակցությունից: Նույն պատճառով խնդիր է ծագել օրենքով սահմանված տևողությունը պահպանելու հարցում, քանի որ մասնակիցների քանակը դա թույլ չի տվել:

Միաժամանակ հայտնում ենք, որ հոկտեմբերի 22-ի և 23-ի բանավեճերի ընթացքում հեռուստաընկերությունն ապահովելու է ժեստերի լեզվով թարգմանության առկայությունը, սակայն սահմանված տևողության ապահովումը շարունակում է կախված մնալ մասնակիցների քանակից»:

Հարկ է նշել նաև, որ հետագայում մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ հեռարձակված բանավեճերի ժամանակ Հայաստանի Հանրային հեռարձակողն ապահովել է նախընտրական բանավեճերի մատչելիությունը լսողության խնդիրներ ունեցող սպառողների համար՝ տեղեկատվությունը ներկայացնելով ժեստերի լեզվով թարգմանությամբ:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 138-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ մարզկենտրոնների ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունն իրավունք ունի անվճար օգտվելու Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի՝ տվյալ մարզում սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողի եթերաժամից ոչ ավելի, քան 20 րոպե: Այս ընտրություններում նորմը վերաբերում էր «ԱՐԱՐԱՏ ԹԻՎԻ», «ԳԵՂԱՄԱ», «ԿՈՏԱՅՔ ԹԻ ՎԻ», «ՍՅՈՒՆԻՔ ԹԻՎԻ», «ՏԱՎՈՒՇ ԹԻՎԻ» ծրագրերին: Հարկ է նշել, որ Արմավիրի մարզում սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակող այս պահին առկա չէ, իսկ «ԿՈՏԱՅՔ ԹԻ ՎԻ» ՍՊ ընկերության լիցենզիայի գործողության ժամկետը Հանձնաժողովի 2026 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 123-Ա որոշմամբ դադարեցվել է՝ ընկերության դիմումի համաձայն:

Ընձեռած անվճար վերոնշյալ եթերաժամերից կուսակցություններն օգտվել են մասնակի, ինչը փաստում է հավելված 2-ում ներկայացված մշտադիտարկման ցուցանիշների աղյուսակը:

Հարկ է նշել, որ այն մեդիածառայություն մատուցող ընկերությունները, որոնք թեև հրապարակել էին իրենց վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը, սակայն նախընտրական քարոզչության ողջ ժամանակահատվածում վճարովի կարգով տրամադրված եթերաժամ չեն ունեցել, ինչպես նաև չեն լուսաբանել նախընտրական քարոզչությունը լրատվական թողարկումներում կամ այլ հաղորդումներում, չեն ներառվել հավելված 2-ում, դրանք են՝ «ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ, «ՖՐԻ ՆՅՈՒՋ» ՍՊ, «ՁԱԳԵՁՈՐ»

ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊ ընկերություններն իրենց կողմից հեռարձակվող համապատասխանաբար «21 ԹԻՎԻ», «ՖՐԻ ՆՅՈՒՋ» և «ՍՅՈՒՆԻՔ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրերով և «ՇԱՆՍ ՄԵԴԻԱ» ՍՊ, «ԱՐՁԱԳԱՆՔ ՍՏ.» ՍՊ, «ԶԱՐԿ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերություններն իրենց կողմից հեռարձակվող համապատասխանաբար «ՌԱԴԻՈ ՇԱՆՍՈՆ», «ՌԱԴԻՈ ՄԱՐՇԱԼ», «ԶԱՐԿ ԷՖԷՄ» լսողական ծրագրով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական մարմիններից, հասարակական և միջազգային կազմակերպություններից, կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից), զանգվածային լրատվամիջոցներից և քաղաքացիներից դիմում-բողոքներ չեն ստացվել:

Նշված ժամանակահատվածում ընտրական օրենսդրության խախտումներ չեն արձանագրվել:

Սույն եզրակացության Հավելված 2-ում զետեղված աղյուսակում ներկայացված են նախընտրական քարոզչության՝ 2026 թվականի սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 23-ն ընկած ժամանակահատվածում տեսալսողական մեդիածառայություն մատուցող ընկերությունների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին հատկացված եթերաժամի վերաբերյալ տվյալներ՝

- անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը.
- վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը.
- լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը.
- այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը.
- լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը:

Անհրաժեշտ է ընդգծել, որ լրատվական թողարկումներից զատ այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը ներառում է ոչ միայն դրական, այլ նաև չեզոք և բացասական անդրադարձերը:

Մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ առանձին տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին տրամադրված եթերաժամի ծավալների միջև առկա է որոշակի անհամաչափություն: Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրության և վերլուծության արդյունքում արձանագրվել է, որ նշված տարբերությունները պայմանավորված են մի շարք օբյեկտիվ հանգամանքներով: Մասնավորապես՝ կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից նախընտրական քարոզչության տվյալ ժամանակահատվածում իրականացված միջոցառումների քանակով և դրանց բաշխմամբ, անվճար և վճարովի եթերաժամից օգտվելու տարբեր ինտենսիվությամբ, տեսալսողական ծրագրերում որպես հյուր հանդես գալու պատրաստակամությամբ, ինչպես նաև նախընտրական քարոզչության մեկնարկից մինչև սույն միջնաժամկետ եզրակացության հրապարակումն ընկած՝ համեմատաբար կարճ՝ 2026 թվականի սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 23-ն ընկած ժամանակահատվածով:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովը գտնում է, որ 2026 թվականի սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 23-ն ընկած ժամանակահատվածում տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին տրամադրված եթերաժամի ծավալների արձանագրված տարբերությունները, հաշվի առնելով դրանց հիմքում ընկած օբյեկտիվ հանգամանքները, ինքնին չեն կարող գնահատվել որպես նախընտրական քարոզչությանը մասնակցող քաղաքական ուժերի համար հավասար պայմանների ապահովման սկզբունքի խախտում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հանձնաժողովը հարկ է համարում ևս մեկ անգամ ընդգծել, որ, իր գնահատմամբ, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված այն դրույթները, որոնց համաձայն՝ սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողները պարտավոր են անվճար եթերաժամ տրամադրել կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին, սահմանափակում և էապես խաթարում են լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցող ընկերությունների իրավունքներն ու օրինական շահերը: Միաժամանակ, մտահոգության տեղիք է տալիս այն հանգամանքը, որ նշված ընկերությունների վրա օրենսդրությամբ արդեն իսկ սահմանված են մի շարք պարտավորություններ, այդ թվում՝ պետական տուրքի և հեռարձակման վճարների վճարման, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված բազմաթիվ պահանջների պահպանման պարտականություններ: Այս պայմաններում, հաշվի առնելով նաև գովազդային եկամուտների շարունակական նվազումը և լսարանի կրճատումը, լրացուցիչ ֆինանսական և վարչական բեռի սահմանումը բացասաբար կանդրադառնա ոլորտի բնականոն գործունեության և զարգացման վրա, ինչպես նաև մատուցվող տեսալսողական բովանդակության որակի ապահովման հնարավորությունների վրա:

Մշտադիտարկման ցուցանիշներից ակնառու է, որ առկա է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին հատկացված եթերաժամի անհամաչափություն: Հանձնաժողովն իրականացրած ուսումնասիրության և վերլուծության արդյունքում հանգել է այն եզրակացության, որ այդ իրավիճակը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ հանգամանքներով, այդ թվում՝ կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից իրենց նախընտրական քարոզչության այս ժամանակահատվածում իրականացված միջոցառումների քանակական բաշխման տարբերություններով, կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից անվճար և վճարովի եթերաժամի օգտագործման, տեսալսողական ծրագրերում հյուրընկալվելու պատրաստակամությամբ:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ տեսալսողական մեդիածառայություններ մատուցող ընկերությունների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տրամադրված եթերաժամի

անհամաչափությունն ինքնին չի կարող դիտարկվել որպես նախընտրական քարոզարշավին մասնակցող քաղաքական ուժերի համար հավասար պայմանների ապահովման սկզբունքի խախտում:

Հավելված N 2
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի
2026 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 138-Ա որոշման

ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ

ԱՐՏԱՇԱՏ, ԱՐՄԱՎԻՐ, ԳԱՎԱՌ, ՀՐԱԶԴԱՆ, ԵՂԵԳՆԱՁՈՐ ԵՎ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ՝ 30.09.2026թ.- 23.10.2026թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» տեսալսողական ծրագիր

հ/հ	կուսակցություն, կուսակցության դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	72' 00''	72' 00''
2	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	72' 00''	72' 00''
3	«ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	11' 30''	0' 00''	0' 00''	72' 00''	72' 00''
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	31' 23''	31' 23''
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ (կազմում՝ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ և «ԳՈՐԾԱՐԱՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ)	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''

2	«ԻՆՔՆԻՇԽԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 30''	0' 00''	0' 00''	28' 59''	28' 59''
3	«ՀԱՅԿԱԿԱՆ ՔՎԵ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	15' 03''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
2	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	27' 30''	27' 30''
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	48' 05''	48' 05''
2	«ՆՈՐ ԴԱՐԱՇԲՋԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	12' 55''	0' 00''	0' 00''	48' 05''	48' 05''
3	«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
2	«ԻՆՔՆԻՇԽԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 30''	0' 00''	0' 00''	26' 00''	26' 00''



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔ» ծրագիր

հ/հ	կուսակցություն, կուսակցության դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	72' 00''	72' 00''
2	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	72' 00''	72' 00''
3	«ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	11' 30''	0' 00''	0' 00''	72' 00''	72' 00''
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	31' 23''	31' 23''
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ (կազմում՝ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ և «ԳՈՐԾԱՐԱՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ)	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''

2	«ԻՆՔՆԻՇԽԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 30''	0' 00''	0' 00''	28' 59''	28' 59''
3	«ՀԱՅԿԱԿԱՆ ՔՎԵ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	15' 03''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
2	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	27' 30''	27' 30''
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
2	«ՆՈՐ ԴԱՐԱՇԲՋԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	12' 55''	0' 00''	0' 00''	48' 05''	48' 05''
3	«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	48' 05''	48' 05''
ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
2	«ԻՆՔՆԻՇԽԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 30''	0' 00''	0' 00''	26' 00''	26' 00''



«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ

«ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ծրագիր

հ/հ	կուսակցություն, կուսակցության դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	68' 00''	68' 00''
2	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
3	«ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 42''	0' 00''	0' 42''
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ (կազմում՝ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ և «ԳՈՐԾԱՐԱՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ)	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''

2	«ԻՆՔՆԻՇԽԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
3	«ՀԱՅԿԱԿԱՆ ՔՎԵ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	68' 00''	68' 00''
2	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
2	«ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
3	«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	1' 10''	0' 00''	1' 10''
2	«ԻՆՔՆԻՇԽԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''

«ՇԱՆԹ» ՍՊԸ

«ՇԱՆԹ» ծրագիր

հ/հ	կուսակցություն, կուսակցության դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
2	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
3	«ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ (կազմում՝ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ և «ԳՈՐԾԱՐԱՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ)	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''

2	«ԻՆՔՆԻՇԽԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
3	«ՀԱՅԿԱԿԱՆ ՔՎԵ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
2	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
2	«ՆՈՐ ԴԱՐԱՇԲՋԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
3	«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
2	«ԻՆՔՆԻՇԽԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	42' 30''	42' 30''

«ՇԱՐԿ» ՍՊԸ

«5-ՐԴ ԱԼԻՔ» ծրագիր

հ/հ	կուսակցություն, կուսակցության դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	109' 31''	33' 58''	143' 29''
2	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	10' 00''	16' 29''	26' 29''
3	«ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	3' 19''	3' 19''
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ (կազմում՝ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ և «ԳՈՐԾԱՐԱՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ)	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''

2	«ԻՆՔՆԻՇԽԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
3	«ՀԱՅԿԱԿԱՆ ՔՎԵ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	6' 40''	0' 00''	6' 40''
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
2	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	1' 51''	1' 51''
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
2	«ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
3	«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	3' 46''	3' 46''
2	«ԻՆՔՆԻՇԽԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 02''	0' 02''



«ԷՖ ԹԻՎԻ» ՍՊԸ

«ԱՐԱՐԱՏ ԹԻՎԻ» ծրագիր

հ/հ	կուսակցություն, կուսակցության դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	20' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
2	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
3	«ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''



«ԳԵՂԱՄԱ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ

«ԳԵՂԱՄԱ» ծրագիր

h/h	կուսակցություն, կուսակցության դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ (կազմում՝ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ և «ԳՈՐԾԱՐԱՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ)	19' 42''	102' 04''	0' 00''	0' 00''	0' 00''
2	«ԻՆՔՆԻՇԽԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''
3	«ՀԱՅԿԱԿԱՆ ՔՎԵ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	15' 16''	0' 00''	0' 00''	0' 00''	0' 00''

«ՏԱՎՈՒՇ ՄԵԴԻԱ» ՍՊԸ

«ՏԱՎՈՒՇ ԹԻՎԻ» ծրագիր

հ/հ	կուսակցություն, կուսակցության դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	172' 06''	172' 06''
2	«ԻՆՔՆԻՇԽԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	0' 00''	172' 06''	172' 06''



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ԱՌԱՋԻՆ ԾՐԱԳԻՐ» ծրագիր

հ/հ	կուսակցություն, կուսակցության դաշինք	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման տևողությունը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության տևողությունը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	13' 30''	0' 00''	13' 30''
2	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	13' 30''	0' 00''	13' 30''
3	«ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	13' 30''	0' 00''	13' 30''
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	1' 40''	0' 00''	0' 00''
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ (կազմում՝ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ և «ԳՈՐԾԱՐԱՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ)	0' 00''	0' 00''	13' 50''	0' 00''	13' 50''
2	«ԻՆՔՆԻՇԽԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	13' 50''	0' 00''	13' 50''

3	«ՀԱՅԿԱԿԱՆ ՔՎԵ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	7' 36''	0' 00''	13' 50''	0' 00''	13' 50''
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	9' 40''	0' 00''	9' 40''
2	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	9' 40''	0' 00''	9' 40''
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	4' 35''	0' 00''	4' 35''
2	«ՆՈՐ ԴԱՐԱՇԲՋԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	4' 35''	0' 00''	4' 35''
3	«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	4' 35''	0' 00''	4' 35''
ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ						
1	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	9' 00''	0' 00''	9' 00''
2	«ԻՆՔՆԻՇԽԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0' 00''	0' 00''	9' 00''	0' 00''	9' 00''